ՍԱՐԱԿԱՊ

Գյուղամիջում կա հին հիմնապատերի վրա վերջին դարերում վերակառուցված մի եկեղեցի՝ Ս. Աստվածածին անունով. եկեղեցու հարավային պատի մեջ, արտաքուստ, նորոգումների ժամանակ օգտագործվել են երեսպատման երկու արձանագրված քար. դրանք դրված են իրար կից և, ըստ երևույթին, բերվել են տվյալ գյուղի և Ձիթհանքովի արանքում՝ բաց դաշտի մեջ գտնվող Ղրըխու կոչվող ավերակ վանքից: Ինչպես գրերի մեծությունները, այնպես էլ բովանդակությունը մատնացույց է անում, որ դրանք երկու տարբեր արձանագրությունների մասեր են. առաջին քարի գիրը պակասավոր է բոլոր չորս կողմերից, իսկ երկրորդի վրա առկա է առաջին տողի մի մասը:

28. Եկեղեցու հարավային խաչաթևի արևմտահայաց որմին, արտաքուստ, 4 տող.



...ԷՆ ՄԷԿՔ...ՐԴՐՀԱԼ... / ...[Շ]ԱՐԻԱՏՆ ԹՈՂԱ[Ք]... /
...ՁՄՈՁԷ ՄԱՒՐՆ ԵՒ... / ...ՁԳՐԵԱԼՍ ՄԵՐ ԽԱ[ՓԱՆԷ]...

Ծանոթ. Հասկացվում է, որ ինչ-որ մեկը թողել է գյուղի *Շարիատ* կոչվող հարկն իր մոր հիշատակին:

29. Նախորդից աջ, 5 տող.

...ԱՅՍ ՄԵՐ ԳԻՐ Յ... / ...[ԱՊՈՒ]ՂԱՄՐԻ
ՄԱԳԻՍ[ՏՐՈՍԻ]... / ...[ԱՄԻՐՍ]ՊԱՍԱԼԱՐ
ՇԱՀՆ[ՇԱՀԻ]... / ...Ր ԱԹԱԲԱԿ ԻՎԱՆ[ԷԻ]... /
...ՈՄԲՆ ՅԵՄԻ Չ...

Ծանոթ. *Ապուղամր Մագիստրոսը հայրն է Անիի և Շիրակի արքեպիսկոպոս Գրիգորի, որը հիշատակված է 1213-1227 թթ. վիմագրերում: Աթաբակ Իվանեն գործել է XII դ. վերջին և XIII դ. առաջին երկու տասնամյակներում: Արձանագրության ժամանակը, հետևաբար, XIII դ. սկզբներն է:*

Վերջին տողի գրերը կիսով չափ են և անկապակից: Գրչագիրը՝ վերևում: